

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 ֆր.
սարկիսի վնասումս	7 "
Արտասահմանի համար սարկիսի	15 ֆր.
վնասումս	8 "
Անտիկառի համար	3 ֆր.
սարկիսի վնասումս	1.50 "

Երանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմիտ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմիտ է, երկրորդ և երրորդ սանթիմիտը համար 20 0/0 զեղչ կրլուս:

Հատույի համար մեկ ֆ 40 սանթիմիտ է

ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՅՈՒՆ. ԲԱՆԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏ՝ ԲԱՆՈՒԻ ՉՈՐԵՔԵԱՐԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

ОТГОВОРНИКЪ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Նամակ եւ դրամ որ կ'ըլ խմբագրութեան հասցիին

Редакция на вѣстники "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjoun" Varna (Bulgarie)

Պուշկարիոյ համար մեկ 15 ՍԱՆԹԻՄ

Արտասահմանի համար մեկ 20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք եւ չեկ տրուի

ՇԱՐՋՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺԱՆՈՐԴԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԷ

«ՏԱՍ ՏՄԻԻ Հ. Թ.

ԳԼԵՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՁ»

Արգէն այս անունով բը բոշիբը յանձնված է տպագրութեան:

Բոշիբը նպատակն է, առանց խժրժանքի Գաշնակցութիւնը մէջ տեղ դնել իր իսկութեամբը և միեւնոյն ժամանակ փաստել թէ՛ իմ պայքաբը սկսված է շատ հին ժամանակից և վերջերս մրայն սուր կերպարանք ընդունեց: Ինչպէս է որ բոշիբը մէջ փաստող դոկիմանները մեծ տեղ պիտի գրաւեն:

Բոշիբը ի գինը տպագրութիւնից վերջ 3 ֆրանկ է լինելու, իսկ բաժանորդ գրվողի համար 2.50 ֆր:

Դիմել «Շարժում» Նմբագրութեան

ՀՍԹ ԴԵՂԱՎԱՃԱՌԱՅՏՈՒՆ

Ս. Գոնարեան եւ Բնկ.

Ստանդարտ փողոց (Պալազ բազար) Թիւ 524 Ս. ուշաթքին ճիշտ տակը

Նոր բազում սոյն գեղավաճառատանս մէջ կը գտնուին մաքուր եւ առաջնակարգ գեղերու մեծաքանակ միջերթէ զատ թարմ հանքային ջուրեր, երոպական ամէն տեսակ էսքէս քալիսթէներ, բժշկական աճառներ, քաւոյնքի սպրանց վերաբերեալ բոլոր առարկաներ, իրիկաթէօրներ, պիպերօրներ, ջերմաչափներ եւն ուն:

Առանցքէ զատ կը գտնուի նաեւ սուսնկարչութեան, ոսկերչութեան եւ առհասարակ արհեստի վերաբերեալ քիմիական մաքուր բազազրութիւններ:

Թարմ եւ անարտա

ն օրվէ կիտայի ձկան կ'ը

Ցարդ գեղերու սղութեան դժգոհութիւն յայտնողները կը բաւէ որ ուրիշ տեղէ մը գնում ընելէ առաջ անգամ մը դիմեն նոր գեղավաճառատանս, ուր ապահովարար պիտի գտնեն գներու աճանութեան հետ գեղերու ընտրելագոյնը:

Շրջակայ քաղաքներու եւ գիւղերու մէջ գեղերու կրկնավաճառումով զբաղող խանութպաններու համար մասնաւոր գեղ:

Յանձնարարութիւնք փութով եւ ճշգրտութեամբ կը պորտագրուին:

Ս Թ Ա Փ Ո Ւ Ս

Մի տարի առաջ երբ ուսկառավարութիւնը որոշ չափով ազատութիւն տուց մամուլին, ու կողկասահայ թերթերը սկսեցին բաւական ազատօրէն գրել հայ կեանքի ցուերի մասին, ա՛տարժու մար 1905 նոյեմբեր 12, 765 թուի առաջնորդողում գրում էինք հետեւեալ տողերը.

«Մենք կարծում ենք որ այժմ ժամանակն է որ Երկրից չը կտրված, երկրի մասին որոշ լուրջ տեղեկութիւններ ունեցոյ, իրական պատմաներին ծանօթ տաճկահայ գրագէտները. հրապարակախօսները ոչ մի միջոց չը խնայեն կովկասի հայ մամուլի միջոցով ամրոցվ տաճկահայ իրականութիւնը իր միջոցով յուսատու և յուսահեռեցնող կողմերով դնել ուսահայերի առջև:

«Մենք համոզված ենք որ կովկասի հայութեան մեծ մասը նորիքան ծանօթութիւն ունի Տաճկահայաստանի իրական կացութեան վրա: որքան Չի նաստանի...»

«Իմ կարծիքով վատ չէլ լինի եթէ կովկասեան «գոտական և լուրջ թերթերից մէկի խմբագրութիւնը մի տաճկահայ հրապարակախօս հրաւիրէր ուղղակի այդ բաժինը զեկաւարելու համար...»

Այս տողերը մենք գրում էինք մի քիչ վարանոտ կերպով, առանց Երկար ու բարակ մանրամասնութիւնների մէջ մտնելու. որովհետեւ այն ժամանակ կովկասը մի տեսակ անտարբեր էր գէպի մեր յեղափոխական կայմակերպութիւնները կամ թէ հը մայված. մեր նպատակն էր միջոցներ ստեղծել տալ կովկասցիներին ծանօթացնելու տաճկահայ կեանքի իրականութեան հետ, ինչպէս և նրա յեղափոխական գործի, որոնք բոլորովին

հակառակ պատկերն էին այն երեւակայական պատկերի որ նը կարում էին մեր կազմակերպութիւնների, մանաւանդ Գաշնակցութեան վաճառված օրգանները. իսկ մեր կարծած անկախ և լուրջ օրգանը հիմնվելու պարագային գառն իրականութիւնը ինքնիրեն մէջտեղ պէտք է գար:

Անցնող տարին, կովկասի և առհասարակ հայութեան համար փոփոխուտ տարին մեր յեղափոխական կազմակերպութիւնների և տաճկահայ յեղափոխական կեանքի էութիւնը պարզելու համար շատ մեծ գործ կատարեց, սպասած իցաւելի մեծ գործ. կովկասահայի աչքերը բացվեցին. նա սկսեց քննադատական աւերիչ, և միանգամայն շինիչ, պորձը Ու այդ քննադատական գործունէութեան արգիւնքը այն եղաւ, որ կովկասահայ մամուլը ազատվեց բոլոր բանաւեղձական երազներից ու ցնորքներից որով կազմակերպութիւնների օրգանները գիւթել էին նրան:

Այսօր կովկասում գոտական հայ խնդրին նուիրված մի առանձին օրգան գոյութիւն ունի՝ «Երկրի Չարձ» Այդ օրգանը գոտափետում է տաճկահայի մասնաւոր յեղափոխական գործունէութիւնը, շարքով ջարդու փշուր անելով բոլոր այն խտրութիւն յեղափոխները, որոնց վրա յեղված մեր յեղափոխական կազմակերպութիւնները ժողովրդին գէպի կտորում և ջարդ էին մղում: Երոպական գաշնակցութիւնը, երոպական հրապարակախօսների համակրութիւնը, դիւանագիտական խոստումներ շարքով փշրվում են գառն իրականութեան տրամաբանութեան տակ. և խոստօրէն գոտապարտվում են զգայնութեան վրա հիմնված յեղափոխական ժեստերը—որոնք գրական արգիւնք չը տալուց զատ անփոխարինելի և անդարմանելի կորուստներ են պատճառել տաճկահային: «Երկրի Չարձ» թիւ 9-ում, «Կարծիքներ (թիւրքահայ հարցի մասին) յօդաձում կար

գում ենք...» չի շտ է, մենք տւինք հայկական հերոսութեան անձնուիրութեան աննման օրինակներ, արտագրեցինք հերոսներ, որոնք կուեցին, թափեցին իրանց արիւնը, որովհետեւ այդ ճանապարհի վրա էին բերել կանգնեցրել նրանց առաջնորդները և գրա մէջ էին ցոյց տուել հայ փրկութիւնը... նրանք կատարեցին իրանց պարտքը. բայց այդ չէ նշանակում, որ այսօր, երբ գառն փորձը ճաշակելու տեց իր կակածելի պտուղները, մենք պէտք է յամառինք մեր բռնած ճանապարհում: Մենք պէտք է խոստովանվենք որ մինչեւ այսօր մեր կատարած բոլոր զոհողութիւնները, հերոսութիւնները սխալ ակնկալութիւնների արդիւնք են եղել և կործանիչ հեռեւանք են միայն ունեցել: Այո՛, պէտք է հրաժարվել հնից և կանգնել նոր ճանապարհի վրա... յօդաձում վերջանում է հետեւեալ ուշադրաւ խօսքերով:

«Հեռու սին յոյսերը և խաբուսիկ ծրագիրները: Ճանաչենք մեր իսկական թշնամին և իսկական բարեկամը»:

«Չայն Երկրի» նշանաբանը և գաւանանքն է որ տաճկահայերը ազգային անկախութիւն ձեռք բերելուց պէտք է հրաժարվեն, պէտք է Թուրքիոյ բոլոր տարրերի հետ միտցած գործեն ներկայ ուժովը տապալելու: Թեկայն, ինչպէս «Չարձ» խոստանք» թերթը ճշտօրէն նկատել է, «Չայն Երկրի» գեռ չէ որոշել, — արգեօք հայ յեղափոխական կազմակերպութիւնները իրբեւ գաշնակցութեան պէտք է գործեն թուրք յեղափոխականների հետ, թէ՛ նըրոնց մէջ ձուլվելով»:

Մեր կարծիքով զերադասելի է որ հայերը իրենց ինքնուրոյն կազմակերպութիւնը պահպանելով և զօրացնելով իրբեւ գաշնակցութեան գործեն: Հայը միանգամից գեռ չէ կարող անձնատուր լինել յեղափոխական տե

սակէտից ինչպէս և համեմատելով
գործելու շահերը ըմբռնելու
տեսակէտից դեռ ևս շատ ետ
մնացած մահճետական այլ և այլ
տարրերին, որոնք մի վայրկեա-
նում կարող են սուրը կրկին դէ-
պի գեաւորները դարձնել: Հայ
յեղափոխական կազմակերպու-
թիւնները պէտք է շարունակեն
զօրանալ երկրի մէջ. պէտք ե-
ղած պարագային զօրաւոր ինք-
նապաշտպանութեան քայլեր
առնելու համար:

Յաջողութիւն ենք ցանկանում.
«Երկրի Չայն» խմբագրու-
թիւնը թող հաւատացած լինի
որ թէ տաճկահայ և թէ նրանց
դատին ներքեւ կովկասահայ
լուրջ, դաւն փորձերից անցած
հայ յեղափոխականները ժա-
մանակի անհրաժեշտ պահանջ
դարձած սթափեցնող պրօպագան-
դի եռանդուն կուսակից են:
Հակառակ կը լինեն միայն վարձ-
կան մամուլը և տգէտ, իրակա-
նութիւն չըմբռնող տարրերը
կամ թէ թրքահայ դատը միայն
ապրուստի միջոց դարձնող աֆե-
րիստները:

ՎԱՐԴՈ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Ա.

Տարի մը անցաւ, և համաշխար-
հային քաղաքական կացութեան մէջ
մեծ փոփոխութիւն մը չը կայ:
Ռուսիան իր ներքին տաղանա-
ներուն մէջ դեռ կը տապալակի: Ա-
ռաջին Տուժման ցրուելէն յետոյ կա-
ռավարութիւնը սկսաւ սարսափ տա-
րածել թէ ժողովրդին և թէ յեղա-
փոխական տարրերուն վրայ, որ-
պէս զի գալիք Տուժման աւելի շափա-
ւոր տարրերէ կազմուի և աւելի
փոքրիկ պահանջներով ներկայանայ:
Այդ նպատակին հասնելու համար
հիմնական գիւնդերական գաշտային
դատարանները որոնք ալ ու ձախ
մահուան վճիռներ սուին նոյն իսկ
կիներու և երկխաներու համար:
Յեղափոխականներն ալ պարսպ չը
մնացին. անոնք ալ ալ ու ձախ պաշ-
տօնեաներ կը սպաննեն, կառավարա-
կան դրամներ կը յափշտակեն պան-
քաներէն, բոստատար թրքներէն և
այլ հիմնարկութիւններէն: Ռուսիա
Ֆինանսական սարսափելի տաղանա-
մէջ կը գտնուի այսօր. բազմաթիւ
նահանգներու ժողովուրդը սովի ճի-
րաններու մէջ կը տառապի. ներք-
նապէս թուլցած Ռուսիան այլեւս
արտաքին նախկին ազդեցութիւնը
չունի. սահմակած է և ընկճուած
ձաբոնի նոր ու խրոխտ պահանջնե-
րէն, Անգլիոյ միջամտութիւնը կը
խնդրէ բայեկամարար վեր-
ջացնելու նոր ընդհարում սպառ-
նացող խնդիրները:

Կովկասի մէջ, հայ-թաթարական
ընդհարումները վերջացան, և ըստ
երեւոյթի երկու ժողովուրդներն ալ
զգացած են որ իրենց բարօրութիւնը
կը կայանայ նախկին բարեկամական

յարարութիւնները վերահաստա-
տելու մէջ: Հայ դե թաթար յոռա-
ջաղէմ մամուլի մէջ այդ նպատակով
բրօքականց կը լլայ ու հաւանական է
որ յաջողութեամբ պսակուի, որով
հետեւ թաթարները համոզուեցան
թէ Կովկասահային այլեւս անմիասն
գալիլ անկարելի է:

Թուրքիան կը շարունակէ իր լա-
րախաղացի դերը միջազգային շահե-
րու լարին վրայ. ներքնապէս միշտ
տանջուելով դրամական և ապստամ-
բական տագնապներէ: Պետական
գանձարանը դատարկ է. ինչպէս
միշտ. զօրքերը կը մոտանան ամ
սական շտապաշնուն համար: Արա-
բիոյ ապստամբութիւնը դեռ կը շա-
րունակուի: Թուրք զօրքերը հոն
կամ կը ջարդուին. կամ թէ անձ
նատուր ու թուրքիոյ ներքին կեան-
քին մէջ ան է ոչ գանձաւոր քաղաք-
ներու մէջ թուրք ժողովուրդը ըմ-
բոստացաւ ծանր և աւելորդ հարկե-
րու պատճառով, վաճառեց պաշտօն-
եաներ ու այդ խլրտումներու ատեն
հայերուն յայտարարեց թէ իրենք չը
խառնուին այդ խլրտումին. որպէս
զի կառավարութիւնը անիթ չունե-
նայ կրկին իր բարկութեան թոյնը
թափելու հայերու գլխուն:

Տարւան մէջ Աուլթանի վտանգա-
ւոր հիւանդութիւնը երեւան ելաւ,
որուն հետեւեցաւ Թուրքիոյ աւան-
դական գահաժողովութեան փո-
փոխութեան խնդիրը: Աուլթանի
ցանկութեան համաձայն, ժէօն թիւր-
քերը օգտուեցան այդ առիթէն ու
սկսան ժողովրդին աչքերը բանալ
Աուլթան Համիտի մինչև օրս հաս-
ցրած վնասներու մասին ինչպէս նաև
գալիք վնասներու երկն Պուրհանդու-
տինը, Աուլթանի սիրելի զաւակը
գահ բարձրանայ:

Աուլթանը սակայն դեռ կը շարու-
նակէ ապրիլ և այցելող դեսպան-
ները շարունակ նպաստաւոր լուրեր
կը տարածեն Համիտի առողջութեան
մասին:
Ժէօն թուրքերը այս տարի աւելի
մեծ եռանդով հայերը կը հրախրեն
իրենց հետ միասին գործելու. ընդ-
հանուր հայրենիքը բարեկարգելու
համար մասնաձեւով որ անանձին
աշխատելով ոչ մէկ նպաստաւոր հե-
տեւանքի պիտի հասնին, որովհետեւ
եւրոպական դիւանագիտութեան նը-
պատակն է ամբողջ Թուրքիան կլլել
ազատ և սանձաճակ շահագործման
համար:

Մեր մէկ մասին վրայ իշխող
պետութիւններէն միոյն Պարսկաս-
տանի մէջ ևս ըստ երեւոյթի անագին
քաղաքական փոփոխութիւն մը տե-
ղի ունեցաւ:
Օրին մէկը յանկարծ ժողովուրդը
հոգնւորականութեան պեկավարու-
թեամբ տունեկակ հազարներով ապստ-
տանեցաւ: Անդրեակաւ դեսպանատուր
և Եւրոպական պետութեան Սահմա-
նադրութիւն պահանջեց, ու շահը զի-
ջեցաւ. սահմանադրութեան պէս
բան մը արուեցաւ. պատգամաւորներ
ընտրուեցան. շահին գովասանքներ
չոչուեցան այլարհիս չորս կողմէն:
Բայց դեռ ևս իրականութեան մէջ
չահնչահի ժողովուրդը ոչ մէկ ի-
րական գոհացում ստացած է:

Պարսիկ հոգեւորականութեան զե-
կավարութեամբ պահանջուած և
ստացուած սահմանադրութիւն մը
դժուար թէ բուն ժողովրդին վիճակը
բարելաւէ:
Արեւելեան անսահման իշխանու-
թեան այդ երեւութական կերպարա-
նափոխումի ատեն, յանկարծ ազա-
տասէր և բարի շահը հիւանդացաւ
և հիմակ մահուան տագնապի մէջ
կը գտնուի, ինչպէս կը հաղորդեն
եւրոպական թերթերը. Գահաժա-
ռանգը արդէն թէ հրան հասած է և
անոր և նոր Եւրոպական կը ըստ
թէ որ ոչ իր հոյ բարի սիրտը ունի
և ոչ ալ անոր ազատական ձգտում-
ները ու սէրը դէպի եւրոպական քա-
ղաքակրթութիւնը:
Արդեօք պարսիկ սահմանադրա-
կանները և նոր Եւրոպական ստացուած
սահմանադրութիւնը ի վնաս եւրոպա-
կան քաղաքակրթութեան չը պիտի
գործադրեն և Պարսկաստանի ներ-
կան աւելի գէշ չը պիտի ըլլայ քան
անցեալը:

ՀԻՒԼԷ

(Շարունակելի)

ՆԱՍԱԿ ԷՆՁԵԼՈՒՑ

21 Նոյեմբեր 1906

Գարեւոր քուն ընկզմած Պարսկաս-
տանը, արթնալով դէպի իրան է
դարձրել հարեւան պետութիւնների
ուշադրութիւնը. Պարսիկ-սահմա-
նադրութիւն, հաւատարմեք արգեօք,
անա այդ խօսքն է օրվայ հարց դա-
նել Ո՞վ զարթեցրեց դոցա մէջ այդ
գաղափարը կամ ինչ է դրդելընկզ
մելու այդ կատաղի ծովի մէջ. որի
այլքներին զոհ գնացին հազարաւոր-
ներ չհասնելով իրանց նպատակաւ:

Արդեօք բունակալներից զըզւած
թէ միայնական ընկալից նեղուած
անում են այդ յանդուք քայլը: Այ-
այդ ոչ այն, ժամանակն է պահանջ-
ում, սովե է ստիպում, հանգամանքն
է մարդուն փոթորիկի և վտանգի
ենթարկում հարի խնդիրն է կասա-
ղի դարձնում: Կարծեք պարսիկ ազգու-
թեան կեանքի գոյութեան կոխէն է
այն ըլլորը. ինչ կատարուած է չե-
յած որ շատերը համոզուած պնդում
են թէ հեղինակը այս խլրտումների
անգիցացին է. բայց սխալ պիտի հա-
մարել այդ կէտը: Լինելով ընկզ
Պարսկաստանցի ուսումնասիրել եմ
երկրացիների յատկութիւնները, մե-
րոնք այն բունութիւնները որը կա-
տարուած են երկար տարիներ ի վեր,
այն հալածանքը ու գրկանքները ո-
րոնց ստանում են շարունակաբար ի-
րանց տիրապետողների կողմից, վե-
րագրում են նախախնամութեան տնօ-
րիմութեան. այդպէս իհարկէ աւելի
այն ժամանակ երբ մի տեսակ կարո-
ղանում էին հայթհայթել կարուստի
հարկները, իսկ երբ բոլոր միջոց-
ները սպառուեց, ապրիլը գծուարա-
նալ սկսեց գորա հետ բացեց գո-
յութեան մրցումը պարսիկ որոնց
երկու բան. կամ կեանքի սպառում
կամ նորա ապահովութիւնը այդ հի-
ման վրա յենված սպառել է նեա-
ւել, վերջերս մտքերի փոխանա-
կութեան ցոյց տեւց շատերին մեր
կեանքի վնասակար կողմերը. իսկ ար-
տասանմանում աւարտած երիտասար.

դոթիւնը պարզեց ազատ ապրելու
կերպերը առաջացնելով ընդհանուր
ապստամբութիւնը կարճ միջոցում,
և այդ բոլորը ոչ թէ շահի դէմ, այլ
այն պաշտօնեաների որոնք մի ինչ որ
պաշտօնով ուղարկուած են այս կամ
այն քաղաքը և սկսում իրենց հը-
րամանների ներքոյ գտնուող ժողո-
վուրդի քսակը պարպել, Մոնում են
տրւելը կամաք դարձնում և հետա-
նում: Յաւախն այն է որ այդ պաշտօն
եաները իրանց մասնաւոր շահերի
համար կառավարութեան անգամ մի-
լիօնների վնաս են տալիս: Ժողո-
վուրդը դիտնալով այդ բոլորը, լը-
նում էր իրկար տարիներ. կարծես
սպասելով մի աներեւոյթ ձեռքի որը
պիտի դար և սպառէր իսկ մի մա-
սը յոյսը գրած ուս կառավա-
րութեան վերա սպասողական դիրք
էր բունում մտածելով կը գայ այ-
դարազատ թագաւորը, կառնէ մեզ
իւր հովանաւորութեան տակ, Բայց
այդ յոյսն էլ ի դերեւ ելաւ. Երբ
վերջին արեւնահողութիւնները տե-
ղի ունեցան. պարսիկը աեսաւ թէ
իւր դիմացինը չէ մարդ, այլ գազան
է մարդու դիմակի տակ, ու որոնց
վերջապէս յենել իւր ուժերին ու
նեաւեց սպառել յեղափոխութեան
ծրագրով, և ահա այսօր էնպէս
ցոյց տեւց մի նմուշ. մտաւորապէս
երկու հազար հոգի հաւաքվելով
խորհրդակցութեամբ որոնցին իրան-
գարովին հեռացնել այս վայրից
տալով նորան այն գումարը որ վճա-
րել է շահնչահին եօթը տարւան պայ
մանով վերցնելով էնպիսի Մաշադ.
սարի, Կանարկաղի և Աստարայի
չրերը ձուկ որսալու համար,
որովհետեւ մեք տեղացի-
նեւս ենթարկելով վտանգի կեանք-
ներ կոխե մղելով փոթորիկների հետ
ծովի յատակից ձուկ որսալով հաց
ենք դուրս բերում, իսկ այդ հացը
ուսելու համարականութիւնը չունենք
քանի որ մենք գտնուած ենք իրա-
նազարովի հրամանների ներքո. այն
ձուկերը որոնց հազարը քսան թու-
ման արժէ հենց մեր շրջաններում
պարտաւոր ենք եօթը թուամեով վա-
ճառելու այն անձնաւորութեան որը
չահի պայմանը ունէ իւր ձեռքում,
Բայց պ. Իրանազարովի նկատի չունէ
այն որ երբ շահնչահը պայմանաւոր-
ված էր, այդ միջոցներում եօթ
թուամեով իւր հաւասարութեամբ կա-
րիքներ էր լրացնում, մինչդեռ այժմ
եօթ զրանի տեղ է բունում, չէ որ
նոյն փոփոխութիւնն է հէջ իւր ա-
նեւսուրի մէջ. քսան տարի ատաջ
ձախող ձուկի սրժէքը սյուր տաս-
նապատիկ աւելացել է: Միթէ մենք
պարտաւոր ենք սնպատաճառ մեզ
վերա աւել արժող պարանքը վնասով
յանձնելու: Մենք կոյր էինք բայց
մեր աչքերը, բաւական է այնքան
տանջանքներ կրեցինք այժմ պիտի
փոխել այդ ընթացքը որ զկպի կոր-
ծանման անդունդն է տանում: Յա-
ռա՞լ եղարարներ, դէպի իրանութիւնը
փակել տեղեք բոլոր շուկան, դազա-
րեցրէ՞ք գործերը, թո՞ղ մեզ միա-
նան բոլոր մեր կրօնակիցները, դի-
մենք հեռագրատուներ, յայտնելու
մեր ցանկութիւնը իսլամի տիրոջ ո-
ղորմած շահնչահին: — Սպաւս էր յոր-
պում մարիօնի վերա կանգնած ե-
րիտասարդը. լուեցին սալաթներ
ձայները մի քանի բուպէից հետ փակ-
ւեցին բոլոր խանութները դու Ալիօ
գոռալով ամբողջ դիմեց նախ տեղա-
յին իսլամ չունի տունը պահանջելով

միանալ իրանց լիամ ջուռն սկսեց մի երկար ճառով բացատրել սկսած զործի վնասակար կողմերը...

Ամբոխը չբաւականանալով այդ պատասխանից շարունակեց գործադուլը Ամսի 18ին որոշեց Ռաշտի դատարար Միրզա Սալէն խալիս (որի տնտեսն է սալարա աքրամ) ուղեւորելու Էնզելի անգամացնելու ժողովրդին...

Ամսոյ 20ին մի խումբ տիկնայք եւ օրբորդներ երիտասարդների հետ տեղեկութիւններ տրուեցին երկուսն օգուտ երկուսն զարգացնելու եւ բարեգործական նպատակին...

ԱՐՈՒՄ

ԺՈՂՈՎՈՐԻՆ ԶԱՒԿԵՐ ԵՒ ՍԻՐՈՂ ԴԱՇՆԱԿԱՆԿԱՆՆԵՐ

Օ՛հ, բարեւ տնտեսներն, գործերն ինչպէս կերթայ կոր. աւրինչ է մասնաւոր վարժարանի ինքնապատ շերտապատ կուտար կոր...

ներ եւ ոչ պիւրջի հրաման, սակայն մենք մեր գործը նորէն կարգի պիտի դնենք: Օրինակ Շաքէի նախագահութիւն պիտի աշխատի որ կրնոր իրենց ժողովները զարգացնելու ընեն ամսական որոշ գումար մը վարձք վճարելով...

Շաքէի նախագահութիւն շատ ներշնչուած է Դաշնակցութեան, ժամկոշ Թաղապետին ճակատը համարուր է վարդօն զարկած լլլալուն համար ճիշտ է. բայց կը զարմանամ չէ որ այդ նախագահութիւն վարդօն կուտար պէս կը պաշտէր ժամանակ մը...

Այո, սենք գիտեցինք. ինչ ըսել կուզես, զէվզէկ, եւ մեր միտքն էր ոպանել վարդօն, Եղա՞մա՞ք տօքթօրը շատ լաւ թարգմանած էր, սակայն ապուշները չեն կրցեր յարմար տեղը զարնել...

Ե՛հ, տնտեսներն, հանգանակութիւնը ինչ եղաւ, որոշած էիք պայքարներէն 150 հազար Փրանք հաւաքել: սպասեալ թողով. հարուստ մը 5000 Փրանք ուզեցիք, քըթիւրուող ինքզնիքն են... հիմա ի՞նչ պիտի ընէք...

Բայց իրօք վարդօն այդ սքողեալ սպանման մէջ ով հաշիւ ունէր: Առաջինը եւ, երկրորդ թորգոր, որու նամակը հրապարակ հանեց եւ փաստեց՝ ա՛նոր կեցի մարդ ըլլալը...

ոսով լլլալով անոր գրածները ամենքն ալ սուտ պիտի հռչակէինք. մենք մեր քէֆին պիտի նայէինք...

Հա, ինչպէս եղաւ որ այդ վարժարաններին ձեր զարգացումը տօքթօր:

Շատ պարզ պատճառով. անոր ներկայութեամբ մենք գրականութեան դասընթաց հիմնեցինք ու մէն աշակերտ այդ դասին համար առանձին խոշոր վարձ պիտի վարէ...

Ուրիշ բան մըն ալ. կրսեն թէ ձեր կ. կոմիտէն ինչ կ'որ պոր է պոռնկատունները կայացնել ժամանակ անցնելու. եւ ձեր նախկին աշակերտները ինչպէս եւ դաշնակցական երիտասարդներ կուգան ձեզ հոն կը գտնան. ճիշտ է:

Սուտ չէ. մենք ազատամիտ մարդիկ ենք. երբ երիտասարդ դաշնակցականներ եւ ուրիշ հայ երիտասարդներ մեզ հոն տեսնան աւելի պիտի համակրին, եւ մեր ձեռքն մեզի, Դաշնակցութեան շարքերը ըստաւարացնեն... մեր համակրներուն թիւը աւելցնելու համար մենք միջոցի խտրութիւն չենք ընելու...

Ուրիշ, կարճը, դուք ցեցեր էք եւ միակ նպատակի կը ծառայէք ազգը, հայրենիքը շանագործել ձեր նշանաբանն է՝ Վեր, արբ, ուրախ լերն...

Ասեղ

ԿԸ ՅԱԶՈՂԻՆՔ

Սա բանին պէտք է լաւ համոզուինք թէ՛ եթէ կամք ու կորով ունենանք ամէն բանի մէջ ալ կը յաջողինք:

«Հայկական ընթերցարանի» վարչութիւնը որոշած էր տեղւոյս պուլ. պարասէրներու «Վե. սելպա» անուն ընկերութեան մասնակցութեամբ պարահանդէս մը սարգել ի նպատակ ընթերցարանին:

Սա շատ զարմանալի և միանգամայն ծիծաղելի ալ պիտի ըլլար, եթէ մի քանի ազնիւ պայտներ յը բողբոջէին այդ որոշման դէմ, ու չբատանձնէին իրենք երեկոյթը սարգելու հոգը, մէկ խօսքով ազգային և տեղւոյս հայ երիտասարդութեան արժանապատուութիւնը բարձր պահելու համար իրենք յանձն առին ամէն զոհողութիւն. րնել, երեկոյթը հայկական և ընտանեկան ընելու:

Հետեւաբար ամսոյ 9ի գիշերը, թէեւ տեղական թերթերու մէջ ոչինչ չէր գրուած պարահանդէսի մասին, բայց մասնաւոր նամակներով հրաւիրած էին վառնայի բոլոր հայ երիտասարդութիւնը, որոնց մէջ կը գրտնուէին նաեւ մէկ քանի հրէայ, յոյն և պուլկար երիտասարդներ, որոնք առանց բացառութեան հաճած էին գալ, բացի հայ լայն ֆիթ պատկանող հայ պարոններէն, (որոշ հասկցնելու համար

է որ սա բառը գործածեցի այս տեղ) որոնք չէին բարեհաճած գալ, ինչու որ եթէ եկած ըլլային, իրենց մէկ քանի ֆրանքով նպատատարած պիտի ըլլային ազգային բարենպաստակ հաստատութեան մը. իսկ անպիսի յումպէտս հարկընտրով ֆրանքներ կը ծախսեն իրենց գարշելի հաճոյից գոհացում տալու համար:

Կարժէ որ քիչ մըն ալ պարահանդէսի մասին խօսինք. Որահր կարելի եղած շափով պարզաբան էին, բազմութիւն այնքան չըկար թէեւ, բայց կրկին գոհացուցիչ էր. առհասարակ պարերու կը մասնակցէին 20 զոյգերէ աւելի, «վալստ» պարգեւները շահեցան հայ օրիորդ մը և հայ պարոն մը, «ճուրջները» իրաւունք յաջողեցին շատ արդիւնաւոր կերպով, եւ պիտի կրնամ ըսել թէ՛ պարահանդէսը իր տեսակին մէջ եղական եղաւ ու ներկաները արահէն մեկնեցան գոհ սրտով:

Ուստի պիտի խնդրեմ յանձնախումբի յարգելի պարոններէն որ միշտ աշխատին ազգային արժանապատուութիւնը բարձր պահել, և օժանդակող հանգիստնալ բոլոր բարենպաստակ հաստատութեանց ու այն ժամանակ պիտի տեսնան թէ՛ ամէն բանի մէջ կը յաջողին:

Շաւօ

Վառնա 11 դեկ. 1906

ԴԱՇՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ԵՒ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ (Կազմակերպական ազդ)

Հ. Յ. Դաշնակցութեան առաջիկայ Դ. յգ Ընկերները ժողովի առիթով նպատակայարար դատուեց պաշտօնական օրգանի միջոցով անել հետեւեալ ծանուցումը:

- 1) Ժողովի տեղի եւ ժամանակի մասին հարկաւոր տեղեկութիւնները կարելի է ստանալ կենտրոնական մարմիններից. կազմակերպական ճանապարհով:
2) Նոյն կենտրոնական մարմիններին է ուղարկւած «Օրակարգը», տարածելու ուր հարկն է:
3) «Օրակարգը» մէջ ցուցակագրւած բոլոր կէտերի վերաբերմամբ մարմիններն ու խմբերը, համաձայն մեր ղեկավարների, պէտք է տան իրենց ներկայացուցիչ - պատգամաւորներին մանրամասն ցուցմունք - հրահանգներ, չը մոտանալով փոքր մասնաւորութեան կարծիքներն ևս, որպէսզի կո սակցած ժողովի մէջ արտայայտեն մեծամասնութեան տեսակետերի հետ միասին: Նոյնպէս եւ փոքրամասնութեան հայեացքներն ու տրամադրութիւնները:
4) Բոլոր մարմինները հրաւիրուած են պարտաստել եւ ուղարկել լրացուցիչ գրամական հաշիւներ, որպէսզի կազմակերպութեան 1904-1906 թւականի դրամական վիճակը պատկերացուի անթերի. իր ամբողջութեամբ:

